ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԱՊՁԲ-20-8-9

ք. Երևան 07.09.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ, մի կողմից, և Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3757000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ծեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ գործերի կառավարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Երևանի ոսկերչական գործարան-1
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 12
վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510001906200100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02556646
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Գլխավոր տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ՄԱԱՊՁԲ-20-8-9 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
h/h	**անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**
1	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալների լրակազմ (Մ.Բաղրամյան, Մ.Բաբաջանյան, Ծ.Իսակով, Մ.Խուդյակով)	Հուշամեդալները պատրաստված են 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված են բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալների բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար դրանք պատրաստվում են դրոշման եղանակով և պրուֆ տեխնոլոգիայով: Լրակազմը բաղկացած է 4 հուշամեդալներից՝ «Մարշալ Բաղրամյան», «Մարշալ Բաբաջանյան», «Ծովակալ Իսակով» և «Մարշալ Խուդյակով»: 1. «Մարշալ Բաղրամյան» հուշամեդալ. Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ» բառերը և պատկերված է զորահրամանատարի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում, պատկերված է մարշալ Հովհաննես Բաղրամյանի ռելիեֆաձև երկու «Ոսկե աստղ» շքանշանները, որոնց աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ ուռուցիկ, անգլերեն լեզվով գրված են «MARSHAL HOVHANNES BAGRAMYAN» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: 2. «Մարշալ Բաբաջանյան» հուշամեդալ. Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ՄԱՐՇԱԼ ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ» բառերը և պատկերված է զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է զրահատանկային զորքերի խորհրդանիշ ռելիեֆաձև զրահամեքենան, որի աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ անգլերեն, ուռուցիկ տառերով գրված են «MARSHAL HAMAZASP BABAJANYAN» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: 3. «Ծովակալ Իսակով» հուշամեդալ. Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ԾՈՎԱԿԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎ» բառերը և պատկերված է Խորհրդային Միության նավատորմի հայազգի ծովակալի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ռազմական նավատորմի խորհրդանիշ ռելիեֆաձև ռազմանավը, որի աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ անգլերեն, ուռուցիկ տառերով գրված են «ADMIRAL HOVANNES ISAKOV» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ոսկեգույն, ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: 4. «Մարշալ Խուդյակով» հուշամեդալ. Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ՄԱՐՇԱԼ ՍԵՐԳԵՅ ԽՈՒԴՅԱԿՈՎ /ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՓԵՐՅԱՆՑ/» բառերը և պատկերված է Խորհրդային Միության ավիացիայի մարշալի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ռազմական ավիաիայի խորհրդանիշ ռելիեֆաձև ռազմական ինքնաթիռ, որի աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ անգլերեն, ուռուցիկ տառերով գրված են «MARSHAL SERGEY KHUDYAKOV /ARMENAK KHANFERYANTS/» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: Հուշամեդալների վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0,3-ից 0,45մմ: Հուշամեդալները տեղադրված են պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարների մեջ, որոնք էլ իրենց հերթին տեղադրված են 4 (չորս) տեղանոց մուգ շագանակագույն տուփի մեջ՝ բարձրությունը՝ 25-ից 35մմ, լայնությունը և երկարությունը՝ 175-ից 185մմ: Տուփի ներքևամասը ծածկված է սև թավշով: Բացվող վերնամասը պատված է արհեստական կաշվով, որը ունի հավասար կողմեր ունեցող քառանկյան ձև՝ մի կողմի երկարությունը՝ 132-ից 142մմ: Կաշվի վրա ոսկեգույնով տպված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Տուփի ներսում գտնվում են 4 (չորս) խոռոչներ՝ հուշամեդալները տեղադրելու համար, իսկ բացվող մասի ներքևի հատվածում ժապավեն՝ իսկության հավաստագրերը տեղադրելու համար՝ որոնք գրված են 3 լեզուներով՝ հայերեն. անգլերեն և ռուսերեն:
2	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Բաղրամյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրուֆ տեխնոլոգիայով Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ» բառերը և պատկերված է զորահրամանատարի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում, պատկերված է մարշալ Հովհաննես Բաղրամյանի ռելիեֆաձև երկու «Ոսկե աստղ» շքանշանները, որոնց աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու ոսկեգույն տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ ուռուցիկ, անգլերեն լեզվով գրված են «MARSHAL HOVHANNES BAGRAMYAN» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: Հուշամեդալի վրա առկա բոլոր

		պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
3	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Բաբաջանյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրուֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ՄԱՐՇԱԼ ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ» բառերը և պատկերված է զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է զրահատանկային զորքերի խորհրդանիշ ռելիեֆաձև զրահամեքենան, որի աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ անգլերեն, ուռուցիկ տառերով գրված են «MARSHAL HAMAZASP BABAJANYAN» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
4	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Ծովակալ Իսակով»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրուֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ԾՈՎԱԿԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎ» բառերը և պատկերված է Խորհրդային Միության նավատորմի հայազգի ծովակալի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ռազմական նավատորմի խորհրդանիշ ռելիեֆաձև ռազմանավը, որի աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝ անգլերեն, ուռուցիկ տառերով գրված են «ADMIRAL HOVANNES ISAKOV» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ոսկեգույն, ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
5	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Խուդյակով»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրուֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին ֆոնային գծապատկերների վրա հայերեն ուռուցիկ տառերով, թեք անկյան տակ, երկու տողով գրված են «ՄԱՇԱԼ ՍԵՐԳԵՅ ԽՈՒԴՅԱԿՈՎ /ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՓԵՅԱՆՑ/» բառերը և պատկերված է Խորհրդային Միության ավիացիայի մարշալի դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ռազմական ավիացիայի խորհրդանիշ ռելիեֆաձև ռազմական ինքնաթիռ, որի աջ և ձախ կողմերում գտնվում են կաղնու տերևների պատկերները: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում՝

		անգլերեն, ուռուցիկ տառերով գրված են «MARSHAL SERGEY KHUDYAKOV /ARMENAK KHANFERYANTS/» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
6	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Անդրանիկ Օզանյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրոֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին հայերեն ուռուցիկ տառերով, ուղղահայաց գրված են «ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ» բառերը և պատկերված է ազատագրական շարժման գործչի ինքնատիպ ռելիեֆաձև դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում, կիսաշրջան վահանի վրա պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը: Զինանշանի վերևում՝ վահանի վրա վերին եզրում՝ հորիզոնական ոսկեգույն տառերով հայերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ կիսաշրջանին համապատասխան՝ «ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: ՀՀ զինված ուժերի զինանշանի կողքերում՝ կիսաշրջանաձև պատկերված են ձիթենու ճյուղեր՝ հաստությունը՝ 4.1-ից 4.2մմ: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
7	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Գարեգին Նժդեհ»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրոֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին հայերեն ուռուցիկ տառերով, ուղղահայաց գրված են «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» բառերը և պատկերված է «Ցեղակրոն» ազգային գաղափարախոսության հիմնադրի ինքնատիպ ռելիեֆաձև դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում, կիսաշրջան վահանի վրա պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը: Զինանշանի վերևում՝ վահանի վրա վերին եզրում՝ հորիզոնական ոսկեգույն տառերով հայերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ կիսաշրջանին համապատասխան՝ «ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: ՀՀ զինված ուժերի զինանշանի կողքերում՝ կիսաշրջանաձև պատկերված են ձիթենու ճյուղեր՝ հաստությունը՝ 4.1-ից 4.2մմ: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
8	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Դրաստամատ Կանայան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրոֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին հայերեն ուռուցիկ տառերով, ուղղահայաց գրված են «ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ» բառերը և պատկերված է ազատագրական շարժման գործչի ինքնատիպ ռելիեֆաձև դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական

		մասում, կիսաշրջան վահանի վրա պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը: Զինանշանի վերևում՝ վահանի վրա վերին եզրում՝ հորիզոնական ոսկեգույն տառերով հայերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ կիսաշրջանին համապատասխան՝ «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: ՀՀ զինված ուժերի զինանշանի կողքերում՝ կիսաշրջանաձև պատկերված են ձիթենու ճյուղեր՝ հաստությունը՝ 4.1-ից 4.2մմ: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
9	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Վազգեն Սարգսյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31.1գ.(1 տրոյական ունցյա), տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3.3մմ: Պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրոֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի դիմերեսին հայերեն ուռուցիկ տառերով, ուղղահայաց գրված են «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» բառերը և պատկերված է հայազգի ռազմական քաղաքական գործչի ինքնատիպ ռելիեֆաձև դիմապատկերը: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում, կիսաշրջան վահանի վրա պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը: Զինանշանի վերևում՝ վահանի վրա վերին եզրում՝ հորիզոնական ոսկեգույն տառերով հայերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ կիսաշրջանին համապատասխան՝ «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: ՀՀ զինված ուժերի զինանշանի կողքերում՝ կիսաշրջանաձև պատկերված են ձիթենու ճյուղեր՝ հաստությունը՝ 4.1-ից 4.2մմ: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է պոլեստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որն էլ իր հերթին տեղադրված է 1 (մեկ) տեղանոց տուփի մեջ: Հուշամեդալի տուփը շագանակագույն է՝ բարձրությունը՝ 40-ից 60մմ, լայնությունը և երկարությունը՝ 80-ից 100մմ: Տուփի վերնամասն ունի քառակուսի խոռոչ, որը պատված կաթնագույն արհեստական կաշվով: Կաշվի վրա ոսկեգույնով պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» և «THE MINISTRY OF DEFENCE OF THE REPABLIC OF ARMENIA» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով: Տուփի ներսի հատվածը ամբողջությամբ պատված է կաթնագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ իսկության հավաստագիրը տեղադրելու համար՝ գրված 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
10	ՀՀ ՊՆ հուշամեդալ	Հուշամեդալը պատրաստված է արույրից և պատված է բարձր հարգի ոսկյա շերտով: Տրամագիծը՝ 50մմ, հաստությունը՝ 2.7-ից 3.5մմ: Հուշամեդալի բարձր որակը և միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է դրոշման եղանակով և պրոֆ տեխնոլոգիայով: Հուշամեդալի կենտրոնում պատկերված է կաղնու և դափնու ճյուղերով եզերված ոսկոգույն ՀՀ ԶՈՒ զինանշանը, որի վրա պատկերված ՀՀ եռագույն դրոշը արծնապատված է գունավոր արծնիով: ՀՀ ԶՈՒ զինանշանը շրջանակված է 3.5-ից 5մմ լայնություն ունեցող կապույտ օղակով: Օղակի վերին հատվածում հայերենով, ոսկեգույն գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ ներքևի հատվածում՝ անգլերենով «MINISTRY OF DEFENCE OF RA» բառերը: Այս երկու գրվածքները տարանջատվում են 1.5-ից 2.5մմ տրամագիծ ունեցող բարձրաքանդակ շրջաններով: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ՀՀ զինանշանը, որի վահանը արծնապատված է կարմիր, կապույտ և նարնջագույն արծնիով: ՀՀ զինանշանը, եզրագծված է 3.5-ից 5մմ լայնություն ունեցող կապույտ օղակով: Օղակի վերին հատվածում հայերենով, ոսկեգույն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ ներքևի հատվածում՝ անգլերենով «REPUBLIC OF ARMENIA» բառերը: Այս երկու գրվածքները տարանջատվում են 1.5-ից 2.5մմ տրամագիծ ունեցող բարձրաքանդակ շրջաններով: Հուշամեդալի միջնապատկերը եզերված է բարձրաքանդակ քսանչորս սուրանկյուններով: Հուշամեդալի վրա առկա բոլոր պատկերների և գրառումների ռելիեֆների բարձրությունները հիմքից պետք է լինեն 0.3-ից 0.45մմ: Հուշամեդալը տեղադրված է 1 տեղանոց շագանակագույն տուփի մեջ՝ բարձրությունը՝ 25-ից 35մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 110մմ: Տուփի վերևամասում ոսկեգույնով պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև հայերենով, ռուսերենով և անգլերենով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Ներքևամասը ամբողջությամբ ծածկված է սև թավշով, իսկ ներսի հատվածը պատված է բաց շագանակագույն թավշով: Հուշամեդալի տուփի ներսում գտնվում է համապատասխան խոռոչ՝ հուշամեդալը տեղադրելու համար: Խոռոչը ունի համապատասխան փորվածք՝ հուշամեդալը տուփից հեշտությամբ հանելու համար: Տուփի բացվող մասի ներքևի հատվածում գտնվում է ժապավեն՝ ՀՀ և ՀՀ ԶՈՒ զինանշանները նկարագրող տեղեկությամբ գրքույկը տեղադրելու համար:

Ծանոթություն՝ Նշված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	
1	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալների լրակազմ (Մ.Բաղրամյան, Մ.Բաբաջանյան, Ծ.Իսակով, Մ.Խուդյակով)	լ-մ	3	139000	417000	մատակարարումը 2020թ. սեպտեմբեր
2	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Բաղրամյան»	հատ	3	35000	105000	
3	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Բաբաջանյան»	հատ	3	35000	105000	
4	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Ծովակալ Իսակով»	հատ	3	35000	105000	
5	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Խուդյակով»	հատ	3	35000	105000	
6	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Անդրանիկ Օզանյան»	հատ	3	35000	105000	
7	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Գարեգին Նժդեհ»	հատ	3	35000	105000	
8	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Դրաստամատ Կանայան»	հատ	3	35000	105000	
9	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Վազգեն Սարգսյան»	հատ	3	35000	105000	
10	ՀՀ ՊՆ հուշամեդալ	հատ	100	25000	2500000	

Ծանոթություն՝ Վերոհիշյալ ապրանքատեսակը մատակարարում են քաղաք Երևան, Բագրևանդի 5 հասցեով (մատակարարի միջոցներով):

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Երևանի ոսկերչական գործարան-1
«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
N ՄԱԱՊՁԲ-20-8-9 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի						
h/h	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝			
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալների լրակազմ (Մ.Բաղրամյան, Մ.Բաբաջանյան, Ծ.Իսակով, Մ.Խուդյակով)	39281210/1	417000	417000	417000	417000
2	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Բաղրամյան»	39281200/5	105000	105000	105000	105000
3	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Բաբաջանյան»	39281200/6	105000	105000	105000	105000
4	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Ծովակալ Իսակով»	39281200/7	105000	105000	105000	105000
5	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Մարշալ Խուդյակով»	39281200/8	105000	105000	105000	105000
6	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Անդրանիկ Օզանյան»	39281200/9	105000	105000	105000	105000
7	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Գարեգին Նժդեհ»	39281200/10	105000	105000	105000	105000
8	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Դրաստամատ Կանայան»	39281200/11	105000	105000	105000	105000
9	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Վազգեն Սարգսյան»	39281200/12	105000	105000	105000	105000
10	ՀՀ ՊՆ հուշամեդալ	39281200/41	2500000	2500000	2500000	2500000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Երևանի ոսկերչական գործարան-1
«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
N ՄԱԱՊՁԲ-20-8-9 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրուս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՄԱԱՊՁԲ-20-8-9 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն